ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հուլիսի 2024թ. N ՄՈ/346-Հ

ք. Արմավիր

«ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լուսինե Գասպարյանի 2024 թվականի հուլիսի 18-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Գասպարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2024 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լուսինե Գասպարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ազատուհի Ադամյանին:
3. «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պատմության ուսուցչուհի Ազատուհի Ադամյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լուսինե Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-18 16:31:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**